ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՐԱՎԱՅԵՐԸ

Աշոտ Ղազարյան

Սերգո Գրիգորյան

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Վրաստանը եւ Հայաստանը, թեեւ հեռու էին անմիջական վտանգից, այդուհանդերձ, ամենասեղմ ժամկետներում մոբիլիզացրին իրենց ուժերը, արդյունաբերությունը հարմարեցրին ռազմական իրողությանը, պատրաստեցին զինվորական հանդերձանք, պարեն, զենք ու զինամթերք, ձեւավորեցին ազգային զինական միավորումներ եւ այդ ամենը տրամադրեցին ռազմաճակատին:

Վաչագան Վանցյան

Սերգո Օգանով

Ի նշանավորումն 1945 թվականի մայիսի 9-ի փառապանծ հաղթանակի 75-ամյակի, հայկական, ռուսական, վրացական եւ աբխազական համապատասխան գրականության եւ մամուլի հրապարակումների հիման վրա մեկտեղել, լրացրել, որոշ շափով թարմացրել եւ ընթերցող հանրությանն ենք ներկայացնում վիրահայ հարյուրավոր, հազարավոր հերոսներից միայն մեկուկես տասնյակ այն քաջազունների սխրանքները, որ նրանք կատարել են երկրի ազատության ու անկախության համար մղված ճակատամարտերում եւ ԽՍՀՄ կառավարության կողմից արժանացել Խորհրդային Միության հերոսի զինվորական բարձրագույն կոչման (այս պատվավոր կոչումը հիմնադրվել էր 1934 թ.):


Լեւոն Դարբինյան

1941-1945 թթ. Վրաստանից այդ կոչմանն արժանացել է 137 հոգի, որոնցից 89 վրացի, 16-ը՝ հայ: 16-ից 5-ը Թբիլիսիից՝ Աշոտ Ասրյանը, Կարապետ Սիմոնյանը, Սերգո Օգանովը եւ Ստեփան Միկոյանը՝ Անաստաս Միկոյանի որդին, որը եւս ծնվել է Թբիլիսիում, 1922 թվականին: 5-ը՝ Միհրան Բոստանջյանը, Երվանդ Գարանյանը, Հարություն Չաքրյանը, Հարություն Շուշանյանը, Հարություն Մելթյանը՝ Աբխազիայից, Սերգեյ Գրիգորյանը՝ Թեթրիծղարոյից, Սուրեն Ասլամազաշվիլին՝ Կասպիից, Սերգո Գալուստաշվիլին՝ Գորիից: 2-ը՝ Լեւոն Դարբինյանը եւ Վաչագան Վանցյանը՝ Ախալքալաքիի շրջանի Ալաստան եւ Զակ գյուղերից, Ապավեն Ռոստոմյանը՝ Բոլնիս-Խաչենից, Աշոտ Ղազարյանը՝ Ծալկայի Չիֆթքիլիսա գյուղից:

Ապավեն Ռոստոմյան

Սխրանքների բնույթով ու բովանդակությամբ նույնպես բազմաշնորհ են մեր երիտասարդները, սպիտակ ֆինների դեմ պատերազմի մասնակից, տանկի ռադիստ Կարապետ Սիմոնյանը հերոսի կոչման արժանացել է 1939 թ. դեկտեմբերի վերջերին՝ հակառակորդի անառիկ համարվող «Մաներհայմի գծի» պաշտպանական ամրությունների ճեղքման ժամանակ ցուցաբերած խիզախության համար:

Ավագ սերժանտ Ապավեն Ռոստոմյանը հունանավետիսյանական է: Հայորդին մարմնով ծածկել է թշնամու գնդացրի հրակնատը եւ իրեն զոհաբերելով՝ ապահովել ստորաբաժանման գրոհի հաջողությունը:

Հրաձգային գումարտակի սանիտարական դասակի հրամանատար Սերգեյ Գրիգորյանը՝ ծանր վիրավոր, մարմնով ծածկել է գումարտակի հրամանատարին՝ սեփական կյանքի գնով փրկելով սպայի կյանքը:

Հարություն Շուշանյանը Փառքի III, II եւ I աստիճանի շքանշանների ասպետ է՝ կոչումով, իրավունքով ու արտոնությունով հավասարեցված Խորհրդային Միության հերոսի կոչման:

Այո՛, ծանրակշիռ է հայ եւ վրաց ժողովուրդների զավակ-զինվորների, հրամանատարների, աշխարհազորայինների, պարտիզանների, հետախույզների ավանդը պատերազմի ընթացքի վճռական շրջադարձի, ապա եւ վերջնական հաղթանակի գործում, Ղրիմի, Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Սեւաստոպոլի, Բրեստի ամրոցի, Կովկասի պաշտպանությունում, Վոլգայի եւ Կուրսկի աղեղի ճակատամարտերում, ԽՍՀՄ եվրոպական մասի, Մերձբալթյան հանրապետությունների եւ Արեւելյան Եվրոպայի մի շարք ժողովուրդների ազատագրման, ինչպես նաեւ՝ ճապոնական միլիտարիստների դեմ մղված մարտերում:

Սուրեն Ասլամազաշվիլի

Այդ մասին հրատարակվել են ուսումնասիրություններ, գրվել են պատմվածքներ, բանաստեղծություններ, նկարահանվել են գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, կերտվել նկարչական կտավներ, նրանց անուններով կոչվել են դպրոցներ, փողոցներ, հիմնադրվել են պատմության թանգարաններ եւ այլն: Կատարած սխրանքների համար նրանք գնահատվել ու մտել են թե՛ Հայրենական մեծ պատերազմի, թե՛ տարբեր երկրների ու ժողովուրդների պատմագրության մեջ:

Միհրան Բոստանջյան

ՀՐԱՉԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆ
Երեւանի պետական համալսարանի հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ

Կարապետ Սիմոնյան

Հարություն Չաքրյան

Երվանդ Գարանյան

Սերգո Գալուստաշվիլի

Աշոտ Ասրյան

Ձեզ ենք ներկայացնում Խորհրդային Միության, ծնունդով վրաստանցի այն հերոսների լուսանկարները, որոնք կարողացանք գտնել «Վրաստան» թերթի խմբագրության արխիվում: Ցավոք, ոչ բոլոր հերոսների լուսանկարներն ունենք:

Հարգելի ընթերցող, եթե ձեր ընտանեկան արխիվում պահպանվել են հոդվածում նշված Խորհրդային Միության հերոսների լուսանկարները, ապա խնդրում ենք ուղարկել մեզ, թերթի 8-րդ էջում տրված էլեկտրոնային փոստով: Նախօրոք հայտնում ենք շնորհակալություն:

ՈՐՈՐՏ

ԿԱԹՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) աջակցությամբ Վրաստանում կաթնագործության զարգացման նոր ծրագիր է մեկնարկվել:

Ծրագրի իրականացման համար հատկացվել է 16 միլիոն եվրո, որի մի մասը դրամաշնորհ է, իսկ մյուսը՝ արտոնյալ վարկ: Թիրախային խմբերը հիմնականում փոքր եւ միջին ֆերմերներ են, որոնք ունեն առնվազն հինգ եւ առավելագույնը՝ 20 գլուխ անասուն:

Ծրագրի շրջանակներում կֆինանսավորվի հիմնական ռեսուրսների ձեռքբերումը: Օրինակ՝ առաջին անգամ կաթնամթերք արտադրությամբ զբաղվողը կարող է համաֆինանսավորում հայցել կաթնարտադրության սարքավորումների կամ գոմի նորոգման համար: Համաֆինանսավորումը տատանվում է 40-ից 80 տոկոսի սահմաններում: Ծրագրի ֆինանսական աջակցության նվազագույն սահմանը 8 000 լարի է, առավելագույնը՝ 195 հազար լարի:

Ըստ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի ներկայացուցչի տված տեղեկության, ծրագիրը սկզբում ընդգրկում էր ընդամենը երեք երկրամաս, սակայն, կառավարության եւ հիմնադրամի միջեւ բանակցությունների արդյունքում, որոշվեց ավելացնել եւս երեքը: Արդյունքում, ծրագիրը կիրականացվի երկրի վեց երկրամասերում:

Կաթնամթերքի աջակցության ծրագիրը վեցամյա է: Համաֆինանսավորումը ստանալու համար ֆերմերները պետք է դիմեն Գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման գործակալությանը: Ծրագրին մասնակցելու համար շահառուն պետք է լինի Վրաստանի քաղաքացի, ֆիզիկական անձ կամ Վրաստանում գրանցված ձեռնարկատեր, նորությունները վերաբերում են նաեւ գյուղատնտեսական կոոպերատիվներին: Նոր ծրագիրը գործարկվել է ապրիլի վերջին: Ներկա դրությամբ ներկայացված է ընդամենը չորս հայտ:

ՖԵՐՄԵՐՆԵՐՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ

Վրաստանի շրջակա բնության եւ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ ու երկրի կառավարության որոշմամբ՝ ողջ 2020 թվականի համար գյուղատնտեսական հողահանդակներ մշակող, ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձինք ազատվում են ոռոգման ջրի վճարումներից:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար լրիվությամբ կմարվեն «Վրաստանի ջրամատակարարում» ՍՊԸ-ին ոռոգման համար 2012-2019 թվականների պարտքը, ընդհանուր առմամբ, այն կազմում է շուրջ 8 միլիոն լարի: Ինչպես նշեց Գիորգի Գախարիան, այս եւ մյուս արտոնությունները, որոնք նախատեսված են հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, ներդրվում են ֆերմերների ագրոարդյունաբերողների կորոնավիրուսով պայմանավորված վնասների մասնակի փոխհատուցման համար:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԴՈՒ ՄԻՆՉ ՕՐՍ ՄՆՈՒՄ ԵՍ ԲՈԼՈՐԻՍ «ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ», ՎԱՐԱԶԴԱՏ ՋԱՆ



Գործին նվիրվածությունն ու արդյունքը, բնավ կապ չունեն բարձր պաշտոնի եւ կամ մեծ եկամտի հետ: Հաջողության գրավականն այս պարագայում դառնում են բնավորության կոնկրետ գծեր, որոնք նկարագրում են մարդկային կերպարը:

Քվեմո Քարթլիում եւ մասնավորապես, Ծալկայում եւ Մառնեուլիում Վարազդատ Շարոյանին շատերն են ճանաչում: Պատասխանատու ու հավատարիմ, շիտակ ու համեստ, գործին անշեղ նվիրումով աշխատել է մի ամբողջ կյանք՝ աշխատատեղում բոլորելով իր ութսունամյակը: Պաշտոնների երբեք չի ձգտել, 1962 թվականից սկսել է իր աշխատանքը որպես էլեկտրասարքավորումներ կարգավորող եւ էլեկտրամատակարարման գծերն ու հարմարանքները անցկացնող բանվոր՝ հայրենի ծննդավայր Աշխալայում: Ապա 1964 թվականից աշխատանքի անցել հարավային Վրաստանի էլեկտրացանցի Ծալկայի բաժանմունքում:

Շրջանի միակ հույսն ու հավատն էր եւ հատկապես դեռ ոչ վաղ անցյալի ծանր տարիներին, երբ էլեկտրաէներգիա գրեթե չկար եւ կամ չափաբաժնով էր մատակարարվում ու դրանից ելնելով հաճախ շարքից դուրս բերում էլեկտրական սարքերը: Բոլորի շտապ օգնությունն էր ու շարունակում է այդպիսին մնալ առայսօր ու հին օրերի նման փայլուն կատարում աշխատանքը: Վաղուց արդեն իր գործում վարպետացած մասնագետը երբեք չի մեծամտանում ու պարծենում: Ու միայն գիտեցողները գիտեն, որ երեք անգամ պարգեւատրվել է կրծքանշանով, բազմակի հաղթող է ճանաչվել իր սիրելի բնագավառում անցկացված մրցույթներում՝ հանրապետության մասշտաբով, իսկ 1979 թվականին՝ արժանացել է հանրապետության արդյունաբերության վաստակավոր աշխատակցի կոչման:

Վարազդատը ոչ էլ գիտի, որ մեր այս սրտաբուխ խոսքը՝ կապված նրա ութսունամյակի հետ, հայտնվելու է իր սիրելի «Վրաստան» թերթում, որի հավատարիմ ընթերցողն է: Կարծում ենք, սա մեր ամենաչնչին երախտիքն ու հարգանքի տուրքն է՝ մեր ավագ ընկերոջը եւ պարզապես արժանի մարդուն, ով իր ազնիվ մարդկային նկարագրով վայելում է իրեն ճանաչող յուրաքանչյուրի սերն ու հարգանքը:

Սիրելի Վարազդատ, շնորհավոր տարեդարձդ: Քեզ երկար ու ձիգ տարիներ, հոգատար ու սիրելի ընտանիքիդ շրջապատում: Առողջ եղիր ու շարունակիր գործդ՝ քո ամուր ու արդար ձեռքերով եւ երիտասարդին վայել աշխույժ խառնվածքով:

ԳՈՉԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Քվեմո Քարթլիի Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ

COVID - 19-Ի ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԿՅԱՆՔԸ ՓՈԽՎԱԾ Է. ԱՌԵՎՏՈՒՐԸ ՍԿՍԵՑ ՀԱՐՄԱՐՎԵԼ

Համավարակ եւ թե բնականոն կյանք, ժամանակն այսպես թե այնպես կանգ չի առնում՝ փոխելով ամենն ու ամենքիս: Օրինակ, ո՞վ կմտածեր, որ մի օր ավանդական շուկային կփոխարիներ սուպերմարկետը ու նույնիսկ կանաչին կգնեինք առանց գինը սակարկելու: Եվ կամ Թբիլիսիում նստած ամերիկյան Amazon.com-ից կոճակի ընդամենը մեկ սեղմումով սրտի ուզածը կպատվիրեինք, իսկ նրա հիմնադիր Ջեֆ Բեզոսը էլեկտրոնային առեւտրի բնագավառում կդառնար ամենահայտնի միլիարդերը՝ ունեցվածքը հասցնելով 131 միլիարդ դոլարի: Եվ վերջապես, աշխարհ կներխուժեր կորոնավիրուսն ու արդեն վաղուց ներխուժած օնլայնը կդարձներ ամենագործածվող բառը՝ բոլոր բնագավառներում:

Վրաստանում համացանցի հասանելիությունն իր հետ օնլայն խանութի գոյությունը բերեց: Օնլայն խանութը, որքան հեշտ առաջին հայացքից, հմտությունների մի ամբողջ փաթեթ է պահանջում: Այդուհանդերձ, օֆլայն խանութի համեմատ՝ տարածքի վարձակալության անհրաժեշտություն չկա, առավել մեծ եկամտի դիմաց շատ ավելի քիչ ծախսեր է պահանջում եւ մշտապես բաց խանութի համար վճարման կարիք չկա: Կարեւորը համակարգչի ու նրա հետ կապված նոր տեխնոլոգիաների թերեւս ամենատարրական գաղտնիքների իմացությունն է, հարմար հարթակը, ծրագրավորման հմտությունները, դիզայնը, լոգոն եւ այլն, մի խոսքով թրենդային մարքեթինգը, որին այսօր շատերն են տիրապետում: Ուստի, համավարակի պայմաններում, մնալով տանը, շատերը սովորեցին օգտվել հենց նման խանութների ծառայություններից, իհարկե ոչ բոլոր ոլորտներին պատկանող:

- ***Իմ գործունեությունը սկսել եմ երեք ամիս առաջ, նախքան համավարակը***,- ասում է թբիլիսցի Քրիստինե Թվալաբեիշվիլին:- ***Զուգահեռ աշխատում եմ գովազդային ոլորտի մի շարք կազմակերպություններում, ուր եւ ձեռք եմ բերել սեփական օնլայն խանութն ունենալու փորձը: Հիմնականում Իստագրամ հարթակում եմ գործում, բայց քանի որ ոչ տեղական արտադրանք եմ առաջարկում, չվերթերի դադարեցումը՝ դանդաղեցրեց իմ աշխատանքը, այս ընթացքում, ցավոք, կորցրեցի սպառողներիցս շատերին: Պատվիրատուն ճիշտ ժամանակին է ուզում ստանալ այն, ինչ պատվիրել է:***

Եթե Քրիստինեի մոտ աշխատանքը դանդաղեց, ապա ոմանց մոտ ընդհանրապես կասեցվեց: Կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ իրավիճակը Վրաստանում հայտարարվեց մարտի 21-ին՝ երկարաձգվելով մինչեւ մայիսի 22-ը եւ թույլատրելով աշխատել միայն կենսականորեն անհրաժեշտ խանութներին ու դեղատներին:

Դիզայներ Քեթի Ջակոնթելին հաճախ է օնլայն պատվերներ ընդունում՝ համագործակցելով Թբիլիսում հայտնի «Գարդենիա Շեւարդնաձե» ծաղիկների խնամքի այգու հետ: ***«Այս պահին ոչ մի պատվեր չեմ իրականացնում: Չեղարկվել են հարսանյաց հանդես եւ այլ միջոցառումներ զարդարելու բազմաթիվ հետաքրքիր պատվերներ: Ամեն ինչ կանգնեցված է: Ծաղկի սրահները միգուցե գովազդում են իրենց ծառայությունը եւ առաքում նույնիսկ: Բայց ինչ խոսք, սա վերաբերում է տեղական ծաղիկներին, որովհետեւ այս պահին Հոլանդիայից եւ այլ երկրներից ծաղիկների ներբերումը «COVID-19» պատճառով արգելված է»:***

Փորձագետները բարձրաձայնում են, որ համավարակի պայմաններում Վրաստանում ամենից շատ տուժեց զբոսաշրջության հետ կապված բիզնեսոլորտը: Որքան էլ ծանոթ պահանջարկ-առաջարկի տեսությանը, օֆլայն խանութատերերից շատերին այդպես էլ չհաջողվեց անցնել օնլայն հարթակ:

Ցիալա Թեյմուրազյանն արդեն տասներկու տարի ձեռագործ հուշանվերների խանութատեր է մայրաքաղաքի Մեյդան թաղամասում: Իբրեւ քաղաքացի սահմանափակումներին նորմալ է վերաբերվում՝ վարակի կանխարգելման կառավարության քայլերը դրական որակելով, բայց իր խանութներն այս պահին փակ են եւ, փաստորեն գործազուրկ է՝ խանութի վեց աշխատակցի հետ միասին: ***«Մեր հաճախորդները հիմնականում զբոսաշրջիկներն էին, սահմանները փակվելուց հետո, առեւտուրը խանութներում գրեթե դադարեց եւ ստիպված էինք փակվել: Ցավոք, այլընտրանք չկար, օնլայն խանութ բացելու դեպքում, պետք է սպառողի հստակ շրջանակ ունենալ: Այս պահին պետության կողմից առայժմ որեւէ աջակցություն չենք ստացել: Ճգնաժամային եւ հետճգնաժամային ծրագրերը նոր են սկսում գործել, եւ միգուցե մենք նույնպես ծրագրին մասնակից դառնանք: Վրաստանն այս ոլորտում տուժած միակ երկիրը չէ, խնդիրը համատարած բնույթ է կրում ամբողջ աշխարհում եւ կարեւորն այս պահին բոլորիս առողջությունն է»:***

Խոսեցինք նաեւ Թբիլիսիի City Broker անշարժ գույքի գործակալ Սվետլանա Թարխանովայի հետ, ում աշխատանքը նույնպես առնչվում է Վրաստանում անշարժ գույք գնել ցանկացող արտասահմանցիների հետ: ***«Օնլայն տարբերակով այս պահին միայն նամակագրական եւ կամ հեռահաղորդակցակապ ենք պահպանում գնորդների հետ: Անշարժ գույքն այս պահին առաջնային չէ՝ պայմանավորված համավարակով ու դոլարի տատանումներով: Մարդիկ կա'մ սպասում են գնանկմանը, կա'մ ժամանակաշրջանն անկայուն համարելով՝ խոսափում այս կարգի ներդրում կատարելուց: Մենք այս պահին այլընտրանք չունենք, բացի նոր գնորդների բազա հավաքելուց: Որպես քաղաքացի բացասաբար եմ մոտենում սահմանափակումներին, քանի որ դրանց առկայությունը դժվարությունների մի ամբողջ շղթա է ստեղծում, որոնց հաղթահարման համար խոչընդոտների մի մեծ ու նոր ճանապարհ է հարկավոր անցնել: Չնայած սա ոչ միայն մեր, այլ այսուհետ ամբողջ աշխարհի խնդիրն է»:***

Մեր զրուցակիցների շրջանում, սակայն, գտնվեցին նաեւ այնպիսիք, ովքեր շուտ հարմարվեցին իրավիճակին՝ փորձելով օգտվել համացանցի վճարովի ու անվճար հնարավորություններից՝ առաքելով այն, ինչ մնացել էր օֆլայն խանութում: Այսպես, բջջային խանութների եւ աքսեսուարների սեփականատեր Միխայիլ Արաբաջյանը 2002 թվականից Թբիլիսիի կենտրոնում գտնվող «Պանդա» վաճառասրահում է իրացնում իր ապրանքը: Ելնելով նրանից, որ փակվեցին խանութներն ու եկամտի աղբյուրը կորցնելու խնդրի առաջ կանգնեց, դիմեց այլընտրանքային տարբերակի: ***«Բջջային հեռախոսների իրացումը համացանցով սկսեցի սոցիալական եւ տարբեր կայքէջերի միջոցով: Ունեմ ֆեյսբուքյան «PhoneMix» էջը, ուր տեղադրում եմ ամբողջ ապրանքը, գովազդելով այն: Այս ամենն իրականացնում եմ ծրագրավորողի միջոցով: Հեռախոսը պատվիրատուին է փոխանցում առաքիչը, ում, ի դեպ, նոր եմ ընդունել աշխատանքի: Օնլայն հարթակն ինձ օգնեց տանը նստելով եւ պահպանելով արտակարգ դրության բոլոր կանոնները, եկամուտ ունենալ: Չնայած օֆլայնը լավ է նրանով, որ գնորդի հետ առերեսմամբ ու համոզելով ավելի հեշտ է ապրանքն իրացնել»:***

Թեեւ նույն կարծիքին Մարինա Բաբայանն է, այդուհանդերձ, նա նույնիսկ... շնորհակալ է կորոնավիրուսին: Արդեն տասը տարի Վարկեթիլիի շուկայում մանկական հագուստի իր կետն ունի: Այդ ընթացքում բազմաթիվ այլ խանութներ են բացվել, բայց Մարինային հաջողվել է հավաքել հավատարիմ հաճախորդների մեծ թիվ: Հենց նրանց հորդորով էլ, համավարակի պայմաններում, տանը նստելով, բացեց իր օնլայն խանութը: ***«Շատ էին զանգում: Մեկի մոտ երեխա էր ծնվում, մյուսի մոտ՝ հագուստը փոքրանում: Դստերս առաջարկով, Ֆեյսբուք եւ այլ հարթակներում բացեցինք մեր խանութի օնլայն տարբերակը՝ հագուստի լուսանկարներով եւ առաքման հնարավորությամբ: Բարեբախտաբար, ինձ ճանաչում էին եւ կար վստահության գործոնը, բայց շատերի համար սա իսկական փորձություն էր: Լինելով լավատես, ես կորոնավիրուսից դրականը փորձեցի քաղել, որի արդյունքում ընտանիքիս կողքին լինելու երկար տարիների բացը լրացրեցի ու նաեւ օնլայն խանութ ունեցա, որի գործունեությունը կհամատեղեմ օֆլայնի հետ: Ինչ վերաբերում է պետական աջակցությանը, ապա, միանվագ օգնության շրջանակներում, ստանալու ենք 300 լարի գումար»:***

Նույն բնագավառում, բայց այս անգամ «Լիլո-մոլի» մեծածախ շուկայի խանութատերերից՝ Դավիթ Բարսեղյանին, չհաջողվեց վաճառքն օնլայն հարթակում իրացնել: Մոտ տասը տարի ընտանիքով երկու խանութ են շահագործում: Արտակարգ դրության սահմանումից անմիջապես հետո, շուկան դադարեցրեց իր գործունեությունը: Այժմ անհամբեր սպասում են սահմանափակումների հանման 4-րդ փուլին, որի ընթացքում վերաբացվելու է Լիլոն: ***«Իհարկե, շատերն անցան օնլայն հարթակ եւ միգուցե այս պայմաններում սա միակ լավագույն տարբերակն էր: Բայց ցավոք, կոնկրետ ինձ համար տեխնիկապես անհնար դարձավ, քանի որ շուկան քաղաքից հեռու է, արվարձանում, այնտեղ է պահեստները, որոնք «COVID-19»-ի պատճառով նույնպես փակ են: Սահմանափակումներին շատ ադեկվատ եմ մոտենում, վստահ լինելով, որ մեր կառավարությունը, բժիշկներն ու համավարակաբանները անում են ամենը՝ վարակի զանգվածային տարածումը կանխելու համար: Մեզանից յուրաքանչյուրն այս պարագայում պետք է գիտակցի, որ կառավարությունը գործում է ի շահ բոլորիս»:***

Ասել է թե՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականների՝ դիմակի կրման, սոցիալական հեռավորության պահպանման, ջերմաչափման ու ախտահանման պարտադիր պայմաններում, շուտով կանցնենք նոր, թեեւ բնականոն կյանքի: Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարմամբ՝ մայիսի 11-ին իրենց գործունեությունը կսկսեն խանութների մեծ մասը, բացառությամբ մոլային ցանցի, ինչպես նաեւ՝ հագուստեղենի եւ կոշկեղենի: Հունիսի 15-ին կբացվի ներքին, իսկ հուլիսի 1-ին՝ արտաքին զբոսաշրջությունը: Եվ չի բացառվում, որ գա մի օր, երբ կորոնավիրուսը բնորոշվի որպես այլընտրանք՝ ժամանակին կյանքն անտանելիորեն հիասքանչ դարձնելու համար:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՅՈՑ ԵՌԱՏՈՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մայիսի 8-ին Շուշիի ազատագրման 28-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն: Նա ծաղիկներ դրեց Հայաստանի Ազգային հերոս, Արցախի հերոս, նորանկախ Հայաստանի պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի, արցախյան հերոսամարտի նվիրյալներ, Հայաստանի Ազգային հերոսներ Մոնթե Մելքոնյանի, Ջիվան Աբրահամյանի, ինչպես նաեւ՝ զորավար Անդրանիկի շիրիմներին, Հայրենիքի ազատության եւ անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների սխրանքը հավերժացնող հուշապատին:

Հանրապետության նախագահը մեկ րոպե լռությամբ հարգել է Հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած նվիրյալների անմահ հիշատակը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈԼԱՊՍ ՉԿԱ»

Մայիսի 6-ին, հանդես գալով Հայաստանի ազգային ժողովում, երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանում սոցիալական կոլապս չկա:

- Ես վստահ եմ ասում՝ այսօր Հայաստանում կան սոցիալական հիմնախնդիրներ, բայց սոցիալական կոլապս չկա, որովհետեւ, եթե լիներ, մենք այսօր դրա մասին կխոսեինք,- նշեց վարչապետը Հայաստանի կառավարության ծրագրի կատարման ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ տարեկան զեկույցի քննարկման ընթացքում:

Անդրադառնալով ճգնաժամային պայմաններում ՀՆԱ-ից տնտեսության մեջ ներդրումների թեմային, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց.

- Մենք տնտեսության մեջ պատրաստվում ենք ներարկել անսահմանափակ քանակությամբ գումար, բայց այստեղ շատ հայեցակարգային մոտեցում կա: Մենք այդ գումարը պատրաստվում ենք ներարկել ոչ թե որպես սոցիալական աջակցություն, այլ ներարկել որպես կապիտալ ներդրում, որպես աշխատանքի հնարավորություն,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Ինչպես նշեց Նիկոլ Փաշինյանը, կառավարությունը Ազգային ժողովի օգնությամբ կարողացել է կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական ճգնաժամը պահել կառավարելիության շրջանակում, սակայն դեռ չի կարելի ասել, թե ճգնաժամն անցել է, առաջիկա առնվազն 1 տարվա ընթացքում՝ մինչեւ մյուս տարվա մայիս, լինելու է կորոնավիրուսային ճգնաժամ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴՈՒ

Մայիսի 6-ին, հանդես գալով Հայաստանի ազգային ժողովում, երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ, Հայաստանում կորոնավիրուսի հետեւանքների չեզոքացման միջոցառումների շրջանակում, ավելի քան 1 մլն մարդ կառավարությունից ստացել է ուղիղ աջակցություն:

Վարչապետը հիշեցրեց, որ կառավարությունը իրականացրել է հակաճգնաժամային 16 միջոցառում:

- Դրանց արդյունքում հասցրել ենք արդեն իսկ կոնկրետ աջակցություն ցուցաբերել շուրջ 21 հազար տնտեսվարողի՝ հատկացնելով արտոնյալ վարկեր: Եվ ավելի քան մեկ մլն մարդ՝ ֆիզիկական անձի, ով կառավարությունից ստացել է ուղիղ աջակցություն,- ասաց նա:

Վարչապետը շեշտեց՝ հակաճգնաժամային գործողության առաջին նպատակը եղել է Հայաստանում խուճապ թույլ չտալը, երկրորդ ամենակարեւոր խնդիրը՝ ապահովել, որպեսզի առողջապահական համակարգը կարողանա սպասարկել կորոնավիրուսով հիվանդ անձանց, այսինքն՝ բոլոր այն մարդիկ, որոնք ունեն բուժօգնության կարիք, ստանան այդ բուժօգնությունը: Այս նպատակով 300 համաճարակային հիվանդանոցային տեղերն առնվազն հնգապատկվել են՝ դառնալով 1500, եւս 150 մահճակալ առաջիկա օրերին շահագործման կհանձնվի: 600 հյուրանոցային-հիվանդանոցային տեղ է պատրաստվել առանց ախտանշանների դեպքերի համար:

Նա նկատեց՝ Հայաստանում կարանատինի պայմաններն ընդհուպ հայտնվել են միջազգային եւ տարածաշրջանային մամուլի ուշադրության կենտրոնում՝ որպես օրինակելի ցուցանիշ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԺՄԱՆ ԲԱՐՁՐ ԾՈՒԾԱՆԻՇ FREEDOM HOUSE-Ի ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

«Freedom House» իրավապաշտպան կազմակերպությունը հետխորհրդային երկրների ժողովրդավարության բարելավման վերաբերյալ իր զեկույցում բարձր է գնահատել Հայաստանի վերջին երկու տարիների ձեռքբերումներն այս ոլորտում:

Ամերիկյան հանրահայտ իրավապաշտպան կազմակերպությունն իր «Անցումային երկրներ 2020» զեկույցի հրապարակման առնչությամբ ընդգծել է, որ Հայաստանն արձանագրել է զեկույցի պատմության մեջ ժողովրդավարության բարելավման ամենաբարձր երկամյա ցուցանիշը:

Զեկույցը նվիրված է հետխորհրդային եվրասիական 29 երկրներում ժողովրդավարական զարգացումներին: Նշվում է, որ Հայաստանը վերջին երկու տարիներին մեծ առաջընթաց է գրանցել ընտրությունների անցկացման եւ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում, դատական համակարգի շուրջ զարգացումները, սակայն, մտահոգությունների տեղիք են տվել զեկույցի հեղինակներին:

«Freedom House»-ի գնահատմամբ՝ քաղաքական փոփոխությունների, օրենքի գերակայության եւ համակարգված կոռուպցիայի դեմ պայքարի շուրջ հանրային համաձայնությունը հիմք է ստեղծել Հայաստանում թավշյա հեղափոխության համար: Հանրային այս պահանջը պատմական հնարավորություն է ժողողովրդավարության զարգացման առումով:

«ՍՓՅՈՒՌՔԸ ԿԱՊԻ ՄԵՋ Է» ԾՐԱԳԻՐԸ ՍԿՍԵՑ ԳՈՐԾԵԼ

Պայմանավորված աշխարհում տիրող իրավիճակով՝ ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը չեղարկել է մի շարք գործուղումներ: Սակայն սփյուռքի հետ կապն ու համայնքների հետ աշխատանքը շարունակում են մնալ Գլխավոր հանձնակատարի գրասենյակի օրակարգի առաջնահերթություններում:

Այդ իսկ նպատակով գրասենյակը Զարեհ Սինանյանի գլխավորությամբ մեկնարկել է «Սփյուռքը կապի մեջ է» ծրագիրը՝ նպատակ ունենալով առցանց հանդիպումների միջոցով շարունակել համայնքային ծանոթությունները, խնդիրների վերհանումն ու հասցեագրումը, համագործակցության խորացումը:

Առաջին առցանց հանդիպումն Իսպանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ էր: Տեսակապի մասնակիցներին ողջունեց Գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը եւ նշեց, որ անկախ աշխարհում տիրող իրավիճակի, սփյուռքի հետ կապը լինելու է մշտական եւ զարգացող:

Այնուհետ իսպանահայ համայնքի անդամները ներկայացրին բնակության երկրում ազգությամբ հայերի իրավիճակը, առօրյան եւ խնդիրները:

Զարեհ Սինանյանը հանդիպմանը նշեց նաեւ, որ, «Քայլ դեպի տուն», երիտասարդ առաջնորդների ծրագրերի իրագործումը կասկածի տակ է, չեղարկվել են մի շարք համայնքային այցելություններ, համաժողովները հավանաբար կանցկացվեն առցանց ձեւաչափով: Սփյուռքի մասնագետների «Ի գործ» ծրագիրը կմեկնարկի սեպտեմբերից եւ արդեն Հայաստանի պետական համակարգում աշխատելու ցանկությամբ դիմել է 800 մասնագետ:

3029 ՎԱՐԱԿՎԱԾ, 1218 ԱՊԱՔԻՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում մայիսի 8-ի դրությամբ հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության ընդհանուր 3029 դեպք, որոնցից 1218-ն՝ առողջացած:

Հայաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տվյալներով, կորոնավիրուսային հիվանդությամբ այս պահին փաստացի բուժում է ստանում 1758 բուժառու: Ընդհանուր առմամբ, կատարվել է 29 205 թեստավորում: Այսպիսով, կա կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված 145 նոր դեպք եւ 33 առողջացած:

Ընդհանուր առմամբ, կորոնավիրուսային հիվանդությունից արչյանագրվել է մահվան 43 դեպք:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ 279 ՎԵՏԵՐԱՆ

Հայաստանում, մայիսի 7-ի տվյալների համաձայն, ապրում է Հայրենական մեծ պատերազմի 279 վետերան: Նրանցից 242-ն արական սեռի ներկայացուցիչ է, 37-ը՝ իգական: Վետերաններից ամենատարեցը 104 տարեկան է՝ ծնված 1916 թվականին:

Նախորդ տարի կառավարության որոշմամբ, Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամյա պատվովճարի չափը կրկնապատկվել էր՝ կազմելով 100.000 դրամ: Այս տարվա ապրիլի 30-ին կառավարությունը հավանության արժանացրեց նախագիծ, ըստ որի, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-ամյակի առթիվ, յուրաքանչյուր վետերանի կհատկացվի 300.000 դրամ՝ որպես գնահատանք նրանց ունեցած վաստակի, եւ որպես սոցիալական պաշտպանության միջոցառում:

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՎԱՐՏՎԵՆ

Պետությունը կավարտի աղետի գոտում բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների նկատմամբ չեւավորված պարտավորությունների կատարումը:

Կառավարությունը հաստատել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները: Հիմնավորման համաձայն՝ 2019թ. տարեվերջի դրությամբ առկա էր բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված մոտ 460 ընտանիքի բնակարանային խնդիր: Այդ ընտանիքներից 227-ը նախընտրել են բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման տարբերակը: Կառավարության պահուստային ֆոնդից հատկացված մոտ 1.29 մլրդ դրամի հաշվին ներկայումս լուծման ընթացքում է գտնվում նրանց բնակարանային խնդրի լուծումը:

Որոշմամբ նախատեսվում է լուծել մնացած 229 ընտանիքի բնակարանային խնդիրը: Ըստ այդմ՝ 229 ընտանիքից 13-ին տրամադրվում է ֆինանսական աջակցություն, իսկ 216-ի համար նախատեսվում է կառուցել բնակելի տներ:

ԹԱՏՐՈՆԸ... ՍՈՑԱՆԵՑ

Երեւանի Կ.Ս.Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը, որը շարունակում է հեռավար աշխատանքը, թատերասերներին կներկայացնի Ֆ.Դոստոեւսկու «Խեղճ մարդիկ» ներկայացումը: Բեմադրության ռեժիսորն է Մանվել Խաչատրյանը:

Առաջնախաղը ցուցադրվել է մայիսի 5-ին՝ ժամը 20:00-ին, թատրոնի «Ֆեյսբուք»-ի պաշտոնական էջում:

«Խեղճ մարդիկ» ներկայացման առաջնախաղը նախատեսված էր թատրոնի փոքր բեմում՝ ապրիլի 21-22-ին, սակայն հայտնի պատճառներով բեմադրության դահլիճային տարբերակը չի կայանա:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ

10.05-2020 Սուրբ Խաչի երեւման տոն

Այս տոնը Երուսաղեմում Սբ. Խաչի նշանի երեւման հիշատակն է: 351 թվականին, ցերեկվա ընթացքում Գողգոթայից մինչեւ Ձիթենյայց լեռը երկնքում երեւում է մի լուսե Խաչ: Հայ Առաքելական Եկեղեցին Սբ. Խաչի տոնը տոնում է Զատիկից 28 օր հետո: Սբ. Հարության տոնի շարժականության պատճառով Սբ. Խաչի երեւման տոնը կարող է տատանվել ապրիլի 19-ից մինչեւ մայիսի 23-ը:

ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՏՈՆԵՑ «ԳԻՈՐԳՈԲԱՆ»

Վրաց Ուղղափառ եկեղեցին մայիսի 6-ին նշեց ամենանշանակալի սրբերից մեկի՝ Սուրբ Գեւորգի տոնը՝ «Գիորգոբան»:

Վրաց Ուղղափառ եկեղեցին տարվա ընթացքում տոնը նշում է երկու անգամ՝ մայիսի 6-ին (գլխատման օր) եւ նոյեմբերի 23-ին (անիվների վրա տանջանքների օր): Հատկանշական է, որ նոյեմբերի 23-ը պետական տոնի կարգավիճակ ունի, համարվում է ոչ աշխատանքային, այդ օրը նշվում է նաեւ իբրեւ Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդանիստ Սբ. Երրորդություն (Սամեբա) մայր տաճարի օր:

Սուրբ Գեւորգը դարձել է քաջության խորհրդանիշը, ամենասիրված սրբերից մեկը՝ համարվելով վրաց ազգի պաշտպան:

ԵԹԱՆԱԿ

ԱՌԱՋԻԿԱ ՕՐԵՐԻՆ ՍՊԱՍՎՈՒՄ Է ՈՒԺԵՂ ՔԱՄԻ ԵՎ ԱՆՁՐԵՎ

Շրջակա միջավայրի ազգային գործակալության տվյալներով առաջիկա օրերին Վրաստանի ողջ տարածքում սպասվում է անկայուն եղանակ,, քամի եւ անձրեւ, առանձին վայրերում, լեռնային շրջաններում, հնարավոր է ամպրոպ: Օդի առավելագույն ջերմաստիճանը կհասնի 23-ից 25 աստիճանի:

Թբիլիսիում հնարավոր է լինի առանց տեղումների եղանակ, իսկ օդի առավելագույն ջերմաստիճանը կհասնի մինչեւ 25 աստիճանի:

Շրջակա միջավայրի ազգային գործակալությունից հայտնում են, որ մայիսի 11-ից կսկսվի եղանակի բարելավում, մայրաքաղաքում եւ արեւելյան Վրաստանում սպասվում է առանց տեղումների եղանակ:

ԴՊՐՈՑ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԴԵՌ ՉԻ ՔՆՆԱՐԿՎԵԼ

Ապրիլի 30-ին Վրաստանում ավարտվեց 4 ուղղությամբ քննությունների գրանցումը:

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, Վրաստանում գրանցվել է ավելի քան 39 300 դիմորդ, դրամաշնորհի մրցույթին մասնակցության համար՝ ավելի քան 3 600 ուսանող, մագիստրոսի թեկնածու՝ ավելի քան 12 600 ուսանող: Ավելի քան 19 600-ը ուսուցիչ եւ ուսուցիչ դառնալու ցանկություն է հայտնել:

Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տեղեկությամբ, այս փուլում միասնական ազգային քննությունների անցկացման ժամկետների փոփոխությունը չի քննարկվում:

«Սովորաբար քննություններն անցկացվում են հուլիսին, եւ դրանց անցկացման ժամկետը հայտնի կդառնա հունիսին»,- ասվում է հայտարարության մեջ:

ԿԳՄՍ նախարարությունը եւ Քննությունների ազգային կենտրոնը ակտիվ աշխատում են քննությունների անվտանգ անցկացման ծրագրի շուրջ եւ անընդմեջ խորհրդակցում են առողջապահական ոլորտի մասնագետների հետ: Ըստ կենտրոնի տեղեկատվության, այս խորհրդատվությունների արդյունքում կորոշվի քննությունների անցկացման հստակ ամսաթիվը:

Ըստ Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի, քննական գործընթացի կազմակերպման ընթացքում հաշվի կառնվեն անվտանգության բոլոր միջոցները, այդ թվում՝ հեռավորության, հիգիենայի նորմերի պահպանման եւ ախտահանման հարցերը:

Հիշեցնենք, ավելի վաղ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, լրագրողների հետ զրույցում, հայտարարել էր, որ քննությունների անցկացմանը վտանգ չի սպառնում, սակայն հնարավոր է քննությունները որոշակի ժամանակով հետաձգվեն:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ԱՐԿԱԴԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կյանքի 38-րդ տարում ողբերգաբար կտրվեց մեր երկրի արժանավոր քաղաքացի, վրաց եւ հայ ժողովուրդների բարեկամության մեծ ջատագով, Վրաստանի եւ Հայաստանի անձնուրաց հայրենասեր, լավ ընտանիքի զավակ, հավատարիմ ամուսին, հոգատար հայր, եղբայր, բարյացկամ ընկեր ու բարեկամ, հիանալի անձնավորություն, ինժեներ-ծրագրավորող Արկադի Մելքոնյանի կյանքի թելը:

Այդ բարի, արտաքինով հմայիչ երիտասարդի վաղաժամ մահը խոր ու մեծ վիշտ պատճառեց նրա ծնողներին, կնոջ ու զավակներին, ընկերներին ու բարեկամներին, բոլոր մերձավորներին:

Մի խումբ ընկերներ
Լուսանկարում՝ Արկադին հոր՝ Բորիսի հետ

«Վրաստան» թերթը իր վշտակցում է թբիլիսահայ համայնքի արժանի զավակ
Արկադի Բորիսի ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
վաղաժամ մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ֆրանսիացի գրող Վիկտոր Հյուգոյի ստեղծագործություններից: 5.Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում հանգչող հայ մեծ վիպասան: 8.Ոչ նիհար, հաստամարմին: 9.Աֆրիկյան պետություն, որի մայրաքաղաքը Լոմեն է: 11.Հարցական դերանուն: 12.Մարգարե, ում անունով է կոչվում Թբիլիսիի հայկական կիրակնօրյա դպրոցը: 14.Լեռնագագաթ Հայաստանում: 15.Այս ավտոմեքենայի ստեղծողներից մեկը ծնունդով Թբիլիսիից Գեորգի Միրզոեւն էր: 17.Գետեր Ասիայում Ամու... եւ Սիր...: 18.Պայթուցիկ զենք: 19.Ղազախստանի նախկին մայրաքաղաքը ...-Աթա: 20.Հայոց կաթողիկոս: 22.Երեւանում լույս ընծայվող երգիծական պարբերական: 24.Գետ Ռուսաստանում: 26.Աշակերտի «աշխատանքը»: 28.Մոզամբիկ պետության ենթակա մաս: 30.Ալբանիայի մայրաքաղաքը: 32.Շտապ, շուտ-շուտ: 33.Հայաստանի մայրաքաղաքներից: 35.Սկիզբ, սկզբնակետ: 38.Յոթերորդ նոտան: 39.Հայ գրող Վահրամ ...: 40.Երկնքի կապույտը: 41.Հայերենի նախածանց: 42.Լսողության օրգան, ականջ: 43.Ինքնաթիռի մակնիշ: 44.Քայլ..., շք...: 45.Գ.Սունդուկյանի գրական հերոս: 47.Ամբողջի մեկ երկրորդ մասը: 50.Ոչ սուր, տափակ: 52.Ժողովում ասված խոսք, ճառ: 54.Հույների գերագույն աստված Զեւսի կինը: 55.Յոթերորդ դարի հայ մանրանկարիչ:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 2.Ուկրաինացի գրող: 3.Հայ անվանի կոմպոզիտոր Տեր-Ղեւոնդյանի անունը: 4.Ստ.Զորյանի պատմվածքի հերոսուհի: 5.Աշտոցյան այբուբենի զինվոր: 6.Թատերական մրցանակ Երեւանում՝ լավագույն ներկայացման կամ դերասանի համար: 7.Հայոց կաթողիկոս, ում ժողովուրդը սիրով Հայրիկ է անվանել: 8.Թիֆլիսում լույս ընծայվող պարբերական, որի խմբագիրը եղել է Մեծն Ջիվանու որդի Գարեգին Լեւոնյանը: 10.Արական անուն, որը պահլավերենից թարգմանված նշանակում է գայլ: 12.«Ես վեր ... ոգի առած, զարկի սրտիս լարերին» (Ավ.Իսահակյան): 13.Ռուսական բիլինայի հերոս ... Մուրոմեց: 16.Հեքիաթ՝ «...ն հրաշքների աշխարհում»: 17.Եվրոպան Ասիայից բաժանող նեղուց: 21.Թանկագին քար: 23.Լեռնաշխարհ Հայաստանում: 25.Ձեյրան, պախրա, վիթ, ...: 27.Սիրված դերասանուհի ... Բաղդասարյան: 29.Գին, արժեք: 31.Քաղաք Բայկալ լճի մոտակայքում: 34.Համակարգչային տառատեսակ: 36.Նախաճաշի եւ ճաշի միջեւ թեթեւ սնունդ: 38.Միջատ, մորմ: 46.Հանրահայտ դերասանուհի ... Ոսկանյան: 48.Հայկի նետից խոցվածը: 49.Լուսնի փյուռիգիական աստվածը: 50.Գարեգին Սարինյանի կեղծանունը: 51.Գազանի «ձեռքը»: 52.Անձնական դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Շիկամուկ: 9.Ուռենի: 10.Կտուց: 11.Օգտակար: 13.Ելցին: 16.Անո: 17.Տուփ: 19.Անլուռ: 22.Հուզիչ: 24.Կնոպկա: 25.Ձագս: 27.Առնոլդ: 29.Հենզել: 32.Անաղի: 33.Ասիդոլ: 35.Կծել: 38.Ամա: 40.Լաուրա: 41.Քարը: 44.Հանք: 47.Մկա: 48.Ալավ: 50.Պաստա: 51.Շեր: 52.Ձի: 53.Իլի: 54.Ռուի: 55.Դեգա:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 1.Ցինգա: 2.Մակաո: 3.Դուկատ: 4.Գուցե: 5.Լենց: 6.Լիոն: 8.Կտրուկ: 12.Տնազ: 14.Լինո: 15.Իշուկ: 18.Շչալ: 19.Անգեղ: 20.Լպուզ: 21.Ռաուլ: 23.Իզոլդա: 26.Գդալ: 28.Ռուսա: 29.Հան: 30.Նիկա: 31.Եղեր: 34.Իմանալ: 36.Ցույլ: 37.Լատվիա: 39.Արկ: 42.Ամառ: 43.Բաշի: 45.Ապի: 46.Քսի: 48.Արդ: 49.Ազգ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445